Մանկական «Տիկնի պսակ» երաժշտածիսական ներկայացում

Սաներից երկուսը տիկնիկներով խաղում են, մեկի տիկնիկը տղա է, մյուսինն՝ աղջիկ: Նրանցից մեկը մյուսին հարցնում է.

- Քո տիկնիկի անունն ի՞նչ է:
- Սաթո, բա քոնի՞ անունն ինչ է:
- Հայկո:
- Կգա՞ս տիկնի պսակ խաղանք:
- Կգամ, արի խաղանք:

Միասին երգում են.

Պսակ-պսակ, տիկնի պսակ.
Էկեք խաղանք տիկնի պսակ,
Տիրնանինե, տիրնանինե,
Զուռնի ձենը գեղով մին է...

Մասնակիցները բաժանվում են երեք խմբի՝ նվագածուներ, հարսնացուի կողմի խնամիներ, տղայի կողմի խնամիներ:

Աղջկա մայրը գովում է իր աղջկան.

- Էսպես աղջիկ ո՞վ ունի,

Շորերով շապիկ ունի,
Մարգրտով կոշիկ ունի,
Մեյդանը հարսնիք ունի:

Տղայի մայրն է գովում իր տղային.

- Տղա ունիմ, բեղերով,

Հարս կբերե քողերով,
Կանաչ վառած մոմերով,
Մերը կելնի խունկերով,
Հերը կելնի փնջերով.

Հանդի լալա իմ տղեն,
Աչքը խումար իմ տղեն,
Բոյը չինար իմ տղեն:

Հարսի տիկնիկով երեխան.

- Կլորիկ ու թմբլիկ եմ,

Պստլիկ ու ճստլիկ եմ,
Քիթս պուճուր – պուճուրիկ է,
Աչուկներս սևուլիկ են,
Կա՞ ինձ նման սիրունիկը:

Բոլորը միասին՝
- Չկա՛, չկա՛, չկա՛:

Փեսայի մայրը.

- Ալ խնձորի իմ տղեն,

Շեկ շլորի իմ տղեն,
Կանաչ թզնի իմ տղեն,
Կարմիր նռնի իմ տղեն,
Բոյը չինար իմ տղեն:

Հարսի մայրը.

- Աղջիկ ունիմ օղերով,

Հարս պիտ անիմ քողերով,
Աղջիկ ունիմ հարսնացու,
Կտրիճ կուզիմ փեսացու:
Ո՞րին տամ, ո՞րին չտամ:

Փեսայի կողմի խնամիները.

- Մեր տղային տուր:

Հարսի մայրը.

- Տա՞մ, թե՞ չտամ:

Փեսայի կողմի խնամիները.

- Տու՛ր, տու՛ր, լավ տղա է:

Կողքից մեկն ասում է.

- Սպասե՛ք, բա չիմանա՞նք՝ հարսն ում է ուզում:

Երգում են «Վեր, հա վեր, վեր» երգը

Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր ասես՝ էնիկ է,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Աչքեր ունես՝ նըռան հատ,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Կապտածաղիկ կըտավհատ,
Վերն, օր ասես էնիկ է,
Էրնեկ թե մերըդ բերեր,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Քեզ պես աղջիկ քանիմ հատ,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Հարսի մայրը.

- Լավ, ում որ կուզի, նրան կտամ:

Հարսիկի տիկնիկը ձեռքին աղջիկը գնում կանգնում է փեսայի տիկնիկը բռնած տղայի կողքին:

Միասին երգում են «Պսակ, պսակ», «Այ ֆոռկա» երգերը

Պսակ-պսակ, տիկնի պսակ.
Փեսեն էկավ՝ լիքը քսակ –
Տիրնանինե, տիրնանինե,
Զուռնի ձենը գեղով մին է...

Բոյը՝ չինար, մեջքին՝ քամար,
Աչքերը՝ ծով, ունքը՝ կամար –
Տիրնանինե, տիրնանինե,
Զուռնի ձենը գեղով մին է...

Այ ֆոռկա

Այ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,
Էսօր մեր տուն հարսնիս կա,
Էսօր մեր տուն հարսնիս կա,
Կոլոտ փեսին բեղ չկա:

Այ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,
Էսօր մեր տուն հարսնիս կա,
Թավեն ծակ է, եղ չկա,
Փեսեն էկավ՝ տեղ չկա:

Այ ֆոռկա, ֆոռկա, ֆոռկա,
Էսօր մեր տուն հարսնիս կա:

Աղջիկները շրջապատում են աղջկա տիկնիկին (փնջատուն), մի կողմ են տանում ու գովում.

Աղջկե՛ք, պար բռնեցեք,
Սաթոյի երես գովեցեք:
Ա՜յ երես, շարմաղ երես,
Դու մեզ չթողնես սևերես:

Աղջկե՛ք, պար բռնեցեք,
Սաթոյի աչեր գովեցեք:
Ա՜յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պես փայլուն աչեր:

Տղաների խումբը, որը շրջապատել է տղայի տիկնիկին, գովում է.

Ջա՛ն, տղե՛ք, պար բռնեցեք,
Հայկոյի կռներ գովեցեք:
Ա՛յ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կշարժեք մեծ-մեծ լեռներ:

Ջա՛ն, տղե՛ք, պար բռնեցեք,
Հայկոյի հասակ գովեցեք:
Ա՛յ հասակ, բարձր հասակ,
Քեզ կվայելե դափնեպսակ:

Տղաները միանում են աղջիկներին ու միասին երգում.

Աղջի, ինչ լավ նազ ունիս,
Սաթոյին գովելու համար ենք եկել,
Չորեք դիմաց մազ ունիս,
Սաթոյին տանելու համար ենք եկել:

Խունջիկ-մունջիկ մի անի,
Սաթոյին գովելու համար ենք եկել,
Մեր տուն գալու կամ ունիս,
Սաթոյին տանելու համար ենք եկել:

Սաթոյին գովելու համար ենք եկել,
Սաթոյին տանելու համար ենք եկել:

Երգում են «Ծառս ծաղկեցավ», «Եկեք, տեսեք, ծառն է ծաղկեր» երգերը

Ծառս ծաղկեցավ, ծաղկեցավ, ծառ կայնեցավ,
Կանաչ ու կարմիր՝ մեր թագավորն էր:

Ծաղիկ բացվեցավ, բացվեցավ, վառ ծաղկեցավ,

Անթառամ ծաղիկ՝ մեր թագուհին էր:

1. Եկեք, տեսեք, ծառն է ծաղկեր,

Եկեք, տեսեք, ծառն է ծաղկեր,
Ծաղիկն ու արևն են վըրան,
Արևն ու ծաղիկն են վըրան:

2. Երբ նռնենուն ծառն, որ ծաղկի,

Երբ նռնենուն ծառն, որ ծաղկի,
Արևդ անոր նըման ծաղկի,
Ծաղիկդ անոր նըման ծաղկի:

Բոլորը միասին. - Հարսը փեսին հալալ է:

Գալիս է տերտերը

Պսակ, պսակ, տիկնի պսակ, արջի քոլոլ, դեղին դմակ,
Կուժն ու կուլեն գլխիդ կոտրեմ, տեր ես, թե՝ չէ:

Փեսան
– Տե՛ր եմ:

Բոլորը միասին բացականչում են.
– Տե՛ր է՛:

Տերտերը

Պսակ, պսակ, տիկնի պսակ, արջի քոլոլ, դեղին դմակ,
Կուժն ու կուլեն գլխիդ կոտրեմ, հնազանդ ես, թե՝ չէ:

Հարսը
– Հնազանդ եմ:

Բոլորը միասին բացականչում են.
– Հնազանդ է՛:

Միասին երգում են «Ծառ ծաղկեցավ» երգը:

Սուրբ Կարապետա օրհնութենով, օրհնութենով
Ծառս ի ծաղկեցավ, ծառս ի ծաղկեցավ,
Ծառ ծաղկեցավ, ճյուղ բազմեցավ՝
Կանաչ ու կարմիր:

Բարեմաղթանքներ, որոնք հղում են մեծերը, փոքրերը

- ✓ **Ձեր տուն մտնի հազար բարի,**

Հաճար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը հորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք՝ լիքը տնով:

Պարերգ - Թամզարա

Թամզարա, հայ, թամզարա,
Թամզարա, հայ, թամզարա,
Թամզարա, հայ, թամզարա,
Համ լե, լե, համ զար ա:

Տանձի ծառը բարձր է,
Թամզարա, հայ, թամզարա,
Վըրի տանձը քաղցր է,
Թամզարա, հայ, թամզարա:

Գնանք նանին հարցընենք,

Թամզարա, հայ, թամզարա,
Թե որ չտա, փախցնենք,
Թամզարա, հայ, թամզարա:

Թամզարա, հայ, թամզարա....

Արևը սարի վըրա,
Թամզարա, հայ, թամզարա,
Մամուռը քարի վըրա,
Թամզարա, հայ, թամզարա:

Էրկու կըռունկ եմ տեսել,
Թամզարա, հայ, թամզարա,
Արագած սարի վըրա,
Թամզարա, հայ, թամզարա:

Թամզարա, հայ, թամզարա...

Բարեմաղթանքներ՝

- ✓ **Կարասն ձեր լցվի գինով,**
  Եվ տունը ձեր՝ շեն բարիքով:
- ✓ **Տաշտներդ լի հաց լինի,**
  Դըռներըդ միշտ բաց լինի:

Պարերգ – Հաց կթխեմ գարի ա

1. Հաց կթխեմ, գարի ա,
   Երի, երի, էրվա, օ՜յ, օ՜յ,
   Էս ինչ ուրախ տարի ա,
   Շեկո ջան, էրվա, օ՜յ, օ՜յ:

2. Ծով ա դառե մեր դաշտը,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Լիքը հաց ա մեր տաշտը,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

3. Հաց եմ թխել մշակին,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Հոտ քաշել մանիշակին,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

4. Հաց կթխեմ, գարի ա,
Երի, երի, էրվա, օ՛յ, օ՛յ,
Կաքավները մավի ա,
Շեկո ջան, էրվա, օ՛յ, օ՛յ:

Բարեմաղթանքներ՝

- ✓ **Ծլեք, ծաղկեք, զորանաք:**
- ✓ **Օրհնվեք, ձեր օջախը շեն մնա, ձեր մինը հազար դառնա:**

Պարերգ - Փափուռի

Նանայ, նանայ, փափուռի,
Նանայ, նանայ, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Ջուր է գալիս էն սարից,
Նանայ, նանայ, փափուռի,
Կաթում է մարմար քարից,
Նանայ, նանայ, փափուռի:

Արև ելավ էն սարից,

Նանայ, նանայ, փափուռի,
Կաքավ կանչեց էն քարից,
Նանայ, նանայ, փափուռի:

Խնձոր ես ծառի վրա,
Նանայ, նանայ, փափուռի,
Ծաղիկ ես սարի վրա,
Նանայ, նանայ, փափուռի:

- ✓ **Ոտքերդ քարին չդիպչի, երկար արև ձեզ:**
- ✓ **Ծաղկեք, ծլեք, ծիր-ծիրանի դառնաք:**

Պարերգ՝ «Հոպ, թռի»

Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի,
Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի,
Վարսո ջան:

Խնձոր ես ծառի վրա,
Հայկո ջան,
Ծաղիկ ես սարի վրա,
Վարսո ջան.
Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի,
Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի,
Վարսո ջան:

Անուշ տաղ ասող բլբուլ,
Հայկո ջան,
Կանգնել ես քարի վրա,
Վարսո ջան.
Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի,

Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի,
Վարսո ջան:

Ախպեր ունեմ՝ ավչի ա,
Հայկո ջան,
Մեջքը բարակ ղամշի ա,
Վարսո ջան,
Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի,
Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի,
Վարսո ջան:

Բարեմաղթանքներ

Օրհնվեք, ձեր օջախը շեն մնա, ձեր մինը հազար դառնա:
Շեն մնաք, ծլեք, ծաղկեք, զորանաք:
Տաշտներդ լի հաց լինի,
Դրոներրդ միշտ բաց լինի:
Օրհնյալ լինեք, յոթը որդով սեղան նստեք:
Մի բարձի ծերանաք, մուրազներիդ հասնեք:
Հիվանդություն թող չլնի, ապրեք շատ ու շատ տարի:
Ոտքերդ քարին չդիպչի, երկար արև ձեզ:
Չոլը գնաք՝ կանաչ դառնա:
Աստծո աջը ձեր գլխից անպակաս լինի:
Ջրի նման երկար կյանք ունենաք, ուրախ օրով ծերանաք:
Օրհնյալ է Աստծո օրհնանքը, Աստծո խաչը միշտ ձեր վրա լինի:
Բախտավոր ապրեք, ձեր տան ծուխը չկտրվի:
Երկար արև լինեք, մազերդ չծռվի:
Սև օր չտեսնեք, հող ցանեք, ոսկի հնձեք:
Օրհնվի ձեր յոթը պորտը:
Ծաղկեք, ծլեք, ծիր-ծիրանի դառնաք: